

երեւանէն (նկար թիւ 26)։ Այս դրան յիշատակարանը հրատարակուած է զանազան տեղեր, սակայն կատարեալ ընթերցումը կը պարտիմ երջանկայիշատակ Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանին, որ 1932ին ողբադեպ Զօղանեանի «Անահիտ»ին մէջ (թիւ 5-6) հրատարակեց մեծարժէք ուսումնասիրութիւն մը, դրան ոչ-ընտիր երկու նկարներու արտատպումով։ Հոս կու տամ յիշատակարանը, միայն սղագրութիւնները պարզելով, բոլորգրով։

Ջ. ՀԱՅՈՅ ԹՎԱԿԱՆԻ

ԼԵ. ԹԻԻ ԱԻԵԼԻ

ՅԱԼՈՒԹԵԱՆ ՏԵԱՆՆ ՍԱՐԳՍԻ

Ի ԽԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՂՈՒՊ ԲԷԿԻ

ԾԱՂԿԵՅԱԻ ԴՈՒՌՆ ՏԱՃԱՐԻՍ

ԱՌԱՔԵԼՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱԻՍ ՎԱՐԴԱՍԵԱՆԻ

ԵՌԱՄԵԾԻՍ ԴԱՆԻԷԼԻ

ԵՒ ՍԻՐԵԼԻ ՈՐԴՈՅ ՍՈՐԻՆ

ԵՊԻՍԿՈՍՈՍ ՏԷՐ ՆԵՐՍԵՍԻ

ՁԵՌԱՄԲ ՍՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԻ

ԱՆԱՐԺԱՆԻՍ ԱՐԲԱՆԱՄԻ

ՆԱԵԻ ԵՂԱՍԻՐ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ

ՇՆՈՐՀԱԻՔ ԻԼԻ ԳՐԻԳՈՐԻՍԻ

ՅՈՏՍ ԱՆԿԻՄ ԱՄԵՆԱՅԻ

ՀԱՅՅԵԼ ՏԵԱՆԷ ՊԱՐԳԵԻ ԶՐԻ

ՐԱՐՈՒՆԱՊԵՏԻՍ ՀԱՄԱՅՆ ԱԶԳԻ

ԵՒ ՇՆՈՂԱՅՆ ԻՐԻՈՅ ԲԱՐԻ

ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՒ ՄԱՐԻՆ,
ՀԱՄՈՐԻ

Նախ եւ առաջ բանք որ բոլոր անոնք որ Գարեգին Կաթողիկոսէն առաջ գրած են այս յիշատակարանին մասին, անկարելի հայադիր թուական մը կազմած են՝ Ջ. ՀԱՅՈՅ Ա. սիկա անհեթեթ է, որովհետեւ հարկւրաւորէն վերջ առնուած է տասնաւոր, յետոյ՝ միաւոր եւ ԴԱՐՁԵԱԼ տասնաւոր եւ դարձեալ միաւոր։ Գարեգին Կաթողիկոս ուշադրութիւն հրաւիրած է որ թուականին Ջ. Էն վերջ եկող ՀԱ պարզապէս ՀԱՅՈՅին կրճատումն է, եւ անտարակուսելի կերպով ուղիղ վերծանած է թուականը՝ ՋԼԵ, այսինքն 1486։

1486ին արդարեւ իմիջածին ունէինք կաթողիկոս մը իբր Սարգիս եւ երկրին տիրակալն էր Եղուպ (Յաղուպ) խան, որդին Ուլուն Հասանի։ Սեւանի վանքին բարու-

նապետ էր արդարեւ Դանիէլ որդի Կարապետ քահանայի եւ Համաւորի։ Դանիէլ կը յիշուի 1452ին իր զբէն ելած Տաթեւացիի «Մատթէոսի Մեկնութիւն»ը պարունակող զբնագրի մը մէջ, ուր ան կը յիշէ ինքզինք իբր արեղայ եւ կը յիշէ նաեւ իր եղբայրները՝ Գրիգորէս քահանայ (նոյնը որ կը յիշուի փայտափորագրեալ դրան յիշատակարանին մէջ), Վրթանէս, Ռստակէս եւ քոյր մըն ալ՝ Սատղ։ Անտարակոյս ինքն է սեւանցի Դանիէլ վարդապետը, որդի Կարապետ քահանայի, որ 1461ին Առաքել աբեղայէ Քարողգիրք մը գնեց։ 1464ին ըստաւարահատոր Տօնական մը գրել կու տայ։ 1471ին ալ փոքրագիր Աւետարան մը պատրաստել կու տայ, ուր իր ազգականներուն շարքին կը յիշէ Տէր Ներսէս Եպիսկոպոս, որ յետոյ դրան յիշատակարանին մէջ ալ պիտի գտնենք յիշուած։

Դրան յիշատակարանին մէջ կ'ըսուի նաեւ

«ԾԱՂԿԵՅԱԻ ԴՈՒՌՆ ՏԱՃԱՐԻՍ

.....

ՁԵՌԱՄԲ ՍՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԻ

ԱՆԱՐԺԱՆԻՍ ԱՐԲԱՆԱՄԻ»

Այս Արքահամը դրան ԾԱՂԿԻՐՂՆ Էր։ Իրեն իբր ծագող-մանրանկարիչ արդարեւ կը հանդիպինք 1471ի Աւետարանին յիշատակութեան մը մէջ, ուր ինքզինք «զբնիկ» կը կոչէ եւ «զաշակերտ եռամեծիս Դանիէլ րարունւոյն Սեւանցիի»։ Պատճառ մը չունինք խորհելու որ Արքահամ գրիչ եւ հաւանաբար ծաղկողը եղած ըլլայ նաեւ անգղական փայտափորագրող, Սեւանի Առաքելոց վանքին գլուխ գործոցը տալու չափ վարպետ։

Դրան փորագրեալ պատկերազրութիւնը, բարեխօսի եւ Հոգեգայտեան խմբաբանդակները, լաւ չարագրուած եւ մեծ վարպետութեամբ ալ փորուած, անծանօթ պատկերազրութիւն չեն մեր մանրանկարչական արուեստին մէջ։ ԺԵ. դարու զբնագիրներուն մէջ յաճախ կարելի է հանդիպիլ (Շարականներու մէջ) քիչ կամ շատ հաւատարմութեամբ կրկնուած իր մանրամասնութեանց հետ։ Ասոնցմէ խիստ բնորոշ օրինակ մը ունիմ 1459 թուականէն, մեծարժէք մանրանկարեալ Շարականցի մը մէջ, որուն մէկ կողքին վրայ կրկնուած է նոյն